ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԳԱԿԸ ՖԱԴԵՅ ՄԱՐԳՍՅԱՆԻՆ «Ս. ՍԱՀԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՅ ԱՌ ՍԻՐԵՅԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՁԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻՍՐ ՖԱԴԵՅ ՄԱՐԳԱՍԵԱՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքներն ենք բերում Ձեզ եւ շնորհաւորում Ձեր ծննդեան 80-րդ տարեդարձի առիթով:

Ցարգարժան պրն Սարգսեան,

Աւելի քան կէս դար Դուք իբրեւ գիտնական, պետական ու քաղաքական գործիչ, նուիրումով ծառայում էք մեր ժողովրդին: Այսօր Մենք ուրախ ենք հաստատելու, որ Ձեր կեանքի յոբելեանական այս հանգրուանը Դուք դիմաւորում էք հայրենաշէն ու ազգօգուտ գործերի վաստակով, սիրուած ու գնահատուած հարազատ ժողովրդի ու հայրենի պետութեան կողմից:

Առ Հայրենին որդիական Ձեր սէրն ու անյոգնաբեկ ջանքերը բազում բարի պտուղներ են տուել մեր ժողովրդի կեանքում: Ձեր անմիջական ղեկավարութեամբ ձեռք բերուած գիտատեխնիկական նուաճումները լայն կիրառութիւն են գտել տարբեր ասպարէզներում՝ ընդգրկուելով արտադրութեան ու պաշտպանութեան, կառավարման ու գիտահետազօտական ոլորտներում: Վարելով վարչական պատասխանատու պաշտօններ եւ աւելի քան մէկ տասնամեակ ղեկավարելով Խորհրդային Հայաստանի Կառավարութիւնը, Դուք մեծապէս նպաստել էք մեր երկրի տնտեսական առաջընթացին, յատկապէս՝ Հայաստանի արդիւնաբերութեան վերակառուցմանն ու հետեւողական զարգացմանը, կրթութեան ու մշակութային կեանքի զօրացմանը:

Մեծապէս ուրախ ենք, յարգարժան պրն Սարգսեան, որ այսօր, որպէս ՀՀ Գիտութիւնների Ազգային Ակադեմիայի պրեզիդենտ, անհուսաց նոյն եռանդով ու նախանձախնդրութեամբ եւ Ձեր հարուստ փորձառութեամբ ծառայում էք հայրենի գիտական մտքի առաջընթացին: Ձեր նախագահութեամբ Ազգային Ակադեմիան յաջողութեամբ շարունակում է իր շնորհակալ առաքելութիւնը մեր ժողովրդի կեանքում՝ բարձր պահելով հայ գիտութեան վարկն ու համարումը:

Մեր սիրեցեալ Հայրենիքին ու ժողովրդին մատուցած Ձեր ծառայութեանց ու վաստակի բարձր գնահատանքով Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Մայր Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ - ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

պատուոյ բարձր շքանշանը:

Տիրոջ օրհնութիւնն ու զօրակցութիւնն ենք հայցում Ձեզ՝ յերկայնս եւ քաջամիտ ու քաջակորով գործելու յանուն հայրենի գիտութեան, Մայր Հայրենիքի ու Առաքելական Սուրբ Եկեղեցու:

Մեր մաղթանքն է նաեւ, որ Բարին Աստուած Իր Հայրական հովանու ներքոյ միշտ առողջ ու երջանիկ պահպանի Ձեզ ու Ձեր ընտանեաց անդամներին՝ յաջողութիւններ պարգեւելով Ձեր բարի գործերին ու նախաձեռնութիւններին:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնք ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 4-ն Յուլիսի
յամի Տեառն 2003 եւ ի թուին հայոց ՌՆԾԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 173